ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@maiI.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 71

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի թվով տասնմեկ բնակիչների դիմումները, և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1 <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից 265000 (երկու հարյուր վաթսունհինգ հազար) դրամի չափով դրամական օգնություն ցույց տալ սոցիալապես անապահով անձանց՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3.Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

25.03.2021թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՎԵԼՎԱԾ
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 25-ի N 71 որոշման

ՑԱՆԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Գումարի չափը (ՀՀ դրամ)
1.	Հերմինե Դալլաքյան	100000
2.	Լիդա Իշխանյան	20000
3.	Լիանա Կարապետյան	20000
4.	Արուսյակ Ամիրյան	20000
5.	Էլադա Դրբոյան	15000
6.	Շուշիկ Կիրակոսյան	15000
7.	Գայանե Կարապետյան	15000
8.	Աշոտ Սարգսյան	15000
9.	Սուսան Խաչատրյան	15000
10.	Ալվարդ Մաթևոսյան	15000
11.	Մանյա Առաքելյան	15000

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26-ը մարտի 2021 թ. N 72

ԱՐԱՄ ՅՈՒՐԻԿԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման , 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88-Ն որոշման պահանջներով և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ ***որոշում եմ.***

1. Արամ Յուրիկի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 2004 թվականի հունիսի 02-ի N 1282185 վկայական / հասարակական նշանակության շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Տոռոզյան փողոց, թիվ 17/28 հասցե:

2. Թույլատրել փոփոխելու Արամ Յուրիկի Աղաջանյանին պատկանող Նոր Հաճն համայնքի Տոռոզյան փողոցի թիվ 17/28 հասցեի, հասարակական նշանակության շինության սպասարկման և դրա պահպանման համար առանձնացված 166.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման հողամաս:

3. Արամ Յուրիկի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Տոռոզյան փողոցի թիվ 17/28 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունը փոփոխել առևտրի սրահի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Յուրիկի Աղաջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը մարտի 2021 թ. N 73
Նոր Հաճն

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Գրիգոր Հարությունի Աբգարյանին տալ բնակելի տան և քարե պարսպի շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Նոր Հաճն համայնքի հարավ արևելյան թաղամասի 8-րդ փողոցի թիվ 8/1 հասցեի հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2021 թվականի N 74

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Տոռոզյան փողոցի 17-րդ շենքի 8-րդ բնակարանի բնակիչ Սմբատ Հարություն Խաչատրյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Սմբատ Հարություն Խաչատրյանին մոր՝ Մարգո Սերոբի Խաչատրյանի թաղման ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

30.03.2021թ.
ք. Նոր Հաճն